



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

25.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/24

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2333 գրության հիման վրա, 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2333 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի 3-րդ 4-րդ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հայտերի բացման նիստի ավարտից հետո սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի պարտավորությունները գերազանցում են ակտիվներին, հետևաբար հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 07.08.2017թ. տեղի ունեցած նիստին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Էդգար Համբարձումյանը:

3. «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը՝ պատշաճ ծանուցված լինելով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԷՍ-2017/24 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.07.2017թ. թիվ

ԴՎԱ/2333 և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 19.04.2017թ. և 17.08.2017թ. տրված տեղեկանքները, Ընկերության կողմից 31.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/07 որոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 26.04.2017թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով մերժվել է, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ և պարտավորությունները գերազանցել են ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3.3 հավելվածով՝ հրավերով սահմանված ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելուն նախորդող՝

ա) երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ) հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Պատվիրատուն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 13.04.2017թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2017թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (21.03.2017թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն 343.398 ՀՀ դրամի չափով և հայտը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91.557.850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64.172.681 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

- 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով

նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

- 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

- 70-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Հրավերի 7.6 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտենից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության հայտը մերժելու մասին Հանձնաժողովի որոշումը 31.05.2017թ. բողոքարկվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում, սակայն Խորհուրդը 19.06.2017թ. ընդունել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/07 որոշումը, որով մերժել է ընկերության կողմից ներկայացված բողոքը:

ԳԲԽ-ԱՄ-2017/07 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ Ընկերության կողմից Խորհրդին ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 19.05.2017թ. տրված տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 21.03.2017թ.' հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, ինչը հաստատվել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ ի պատասխան Խորհրդին ուղարկված 14.06.2017թ. թիվ 1/6-1/20770-17 գրությամբ:

Նույն որոշմամբ Խորհուրդն արձանագրել է նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 19.04.2017թ. Պատվիրատուին տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91.557.850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64.172.681 ՀՀ դրամ, ինչը հիմք է հանդիսացել ներկայացված բողոքը մերժելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2017թ. թիվ 03/26-1/10810-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնվել էր «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ, որը Խորհրդի կողմից ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԷՍ-2017/13-1 ծածկագիրը:

Նշված պաշտոնական ընթացակարգի քննության ընթացքում 01.08.2017թ. կայացած նիստի ժամանակ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Խորհրդին հայտնել է, որ 07.06.2017թ. ներկայացրել են 2016թ. շահութահարկի ճշգրտված հաշվարկ, որի արդյունքում Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Խորհուրդը 04.08.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով վերջինիս տալ եզրակացություն այն մասին, արդյոք Ընկերության հայտը ներկայացնելուն (02.05.2017թ.) նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը, թե՛ ոչ:

Խորհրդի հարցմանն ի պատասխան 17.08.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրվել է եզրակացություն առ այն, որ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու (02.05.2017թ.) օրվա դրությամբ նախորդող տարվա ակտիվների

հաշվեկշռային արժեքը կազմել է 64.172.681 դրամ, պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 91.557.850 դրամ, սակայն հարկ վճարողի կողմից 07.06.2017թ. ներկայացվել է 2016թ. շահութահարկի ճշգրտված հաշվարկ, համաձայն որի ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 64.172.681 դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 56.557.850 դրամ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

- 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

- 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանաձնաժողովը, Ընկերության հայտը Կոմիտեի կողմից 19.04.2017թ. տրված տեղեկանք-եզրակացության հիման վրա մերժելով՝ գործել է իրավաչափ, սակայն Խորհուրդը հիմք ընդունելով Կարգի 70-րդ կետով սահմանված պահանջները, գտնում է, որ խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և նույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.08.2017թ. թիվ 03/27-1/14021-17 գրությամբ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ